

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Սամվել Զալիբեկի Կրոյանի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատումը հողերի անթրոպոգեն փոփոխությունների ուսումնասիրությունների արդյունքներով» թեմայով Ե. 23. 06. - «Գեոդեզիա, ներառյալ քարտեզագրություն և կադաստր» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար

Թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության համար ներկա ժամանակաշրջանում առաջնահերթ հիմնախնդիրներից է գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա անթրոպոգեն ազդեցության հետևանքների մեղմացումը, ինչը կենսական նշանակություն ունի հողային պաշարների պահպանման և կայուն օգտագործման տեսանկյունից: Հողակադաստրային շրջանացման և կադաստրային գնահատման գործընթացների արդյունավետ կազմակերպումն անհրաժեշտ պայման է հողատեսքերի համակարգված կառավարումն իրականացնելու համար: Այս պարագայում չափազանց կարևոր է հստակ և բազմակողմանի տվյալների առկայությունը հողի այն հիմնական հատկությունների վերաբերյալ, որոնք ուղղակի ազդեցություն ունեն կադաստրային գնահատման ցուցանիշների ձևավորման համար:

Հողատեսքերի կադաստրային գնահատման տվյալները հանդիսանում են տեղեկատվական հիմք հողի հարկի և վարձավճարների չափերի որոշման, հողատարածքների շուկայական արժեքի հաշվարկման համար:

Այս տեսակետից գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հողակադաստրային շրջանացման և կադաստրային գնահատման գործընթացների իրականացումը շարունակում է մնալ արդիական և հիմնարար կարևորություն ունեցող խնդիր:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, ընդհանուր եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքը շարադրված է 242 էջի վրա, որը ներառում է 38 աղյուսակ, 65 նկար, 1 ներդրման ակտ և հավելված, օգտագործված գրականության 208 անվանում:

Առաջին գլխում ներկայացված է թեմային առնչվող հայրենական և արտասահմանյան գրականության վերլուծությունը, որտեղ հանգամանորեն քննարկված և վերլուծված են տարածքի հողակադաստրային շրջանացման, գյուղատնտեսական հողահանդակների ագրոարտադրական խմբավորման, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատման սկզբունքները:

Երկրորդ գլխում հեղինակը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տարածքի հողերի դասակարգման սկզբունքները: Այժմ գործող դասակարգման սխեմայում կատարվել են արժեքավոր լրացումներ: ՀՀ հողերը դասակարգվել և խմբավորվել են ըստ միջազգային WRB համակարգի: Համաձայն նոր դասակարգման հանրապետության 14 հողատիպերը խմբավորվել են 9 ռեֆերատիվ խմբերում:

Երրորդ գլխում տրվում է հանրապետության հիմնական հողատիպերի մի շարք կարևորագույն հատկանիշների անթրոպոգեն փոփոխությունների տվյալները: Հետազոտություններից պարզվել է, որ գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի երկարատև, չկանոնակարգված գյուղատնտեսական օգտագործումը հանգեցրել է հողերի այնպիսի կարևորագույն հատկությունների բացասական փոփոխության, ինչպիսիք են հումուսի պարունակությունը, ստրուկտուրային և ագրեգատային կազմը, գրանուլոմետրիական կազմը, հողային լուծույթի ռեակցիայի բնույթը, կլանված հիմքերի պարունակությունը և այլն: Այս գլխում ներկայացված է նաև հողերի ծանր մետաղներով աղտոտվածության աստիճանը: Ուսումնասիրությունները կատարվել են Ջագեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, Վանաձորի քիմիական գործարանի, Ալավերդու պղնձածուլական կոմբինատի, ինչպես նաև Արարատի և Հրազդանի ցեմենտի գործարանների հարակից տարածքներում:

Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ այս ձեռնարկություններից

որքան հեռանում ենք, այնքան հողերի ծանր մետաղներով աղտոտվածության ցուցանիշները նվազում են: Հողերի աղտոտվածության աստիճանը նվազեցնելու համար արվել են արժեքավոր առաջարկություններ:

Չորրորդ գլխում բերված են հանրապետության տարածքի հողակադաստրային շրջանացման և ագրոարտադրական խմբավորման սկզբունքները: Համաձայն այս շրջանացման ՀՀ տարածքում առանձնացվել են 5 հողակադաստրային մարզեր և բազմաթիվ շրջաններ ու ագրոարտադրական խմբեր: Տարածքի նման շրջանացումը խթանում է գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատման արդյունավետության բարձրացմանը: Ստացված տվյալներով կազմվել է ՀՀ հողակադաստրային շրջանացման քարտեզ-սխեմա:

Հինգերորդ գլխում ներկայացված է հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատման գործընթացները: Այստեղ տրված են վարելահողերի, բազմամյա տնկարկների, արոտատավայրերի և խոտհարքների կադաստրային գնահատման սկզբունքները:

Թվային միջավայրում մշակվել է Աշոցք հողակադաստրային շրջանի սահմանները ներկայացնող տարածական տվյալների շերտ: Այնուհետև ըստ տարածագնահատման գոտիների թվային միջավայրում ստեղծվել է գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային և շուկայական արժեքները ներկայացնող ատրիբուտային բազայով տարածական տվյալների շերտ (ԱՏՀ):

Հայցորդի կողմից առաջադրված գիտական դրույթները և եզրահանգումները հիմնավորված են հետազոտվող գործընթացների տեսական հիմնավորմամբ և գիտափորձերի արդյունքների համեմատական վերլուծություններով: Հեղինակը օգտագործել է ժամանակակից վերլուծական միջոցներ, որոնք հնարավորություն են տվել հաջողությամբ իրականացնել հետազոտությունների ծրագրերն ու նպատակը, լուծել առաջադրված խնդիրները, որոնք կապված են հողակադաստրային շրջանացման, հողերի ագրոարտադրական խմբավորման և գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատման հետ:

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են 35 տպագիր աշխատանքներում, որոնցից 9-ը Scopus և 2-ը Web of science գիտատեղեկատվական շտեմարաններում:

Հեղինակի կողմից կատարված տեսական, փորձնական և մեթոդական լայնածավալ հետազոտությունների արդյունքները բարձր գնահատելով, այնուհանդերձ ատենախոսական աշխատանքում տեղ են գտել մի շարք անճշտություններ և թերություններ, որոնք բերված են ստորև դիտողություններում:

1. Նկ. 3-ի քարտեզի վրա նշված կտրվածքների տեղադրման վայրերի անվանումները վատ ընթեռնելի են, էջ 15:

2. Ծանր մետաղներով հողերի աղտոտվածությունը ուսումնասիրվել է խոշոր ձեռնարկությունների շրջակա հողերում: Սակայն հողերը զգալի աղտոտված են նաև ավտոմայրուղիների մերձակա տարածքներում, որոնց մասին տեղեկատվություն ներկայացված չէ:

3. Նկ. 3.48 –ի գրաֆիկի թվերը և գրությունը խառնված են, էջ 109:

4. Որոշ քարտեզներում մասշտաբը և կոորդինատային համակարգը նշված չէ, նկ. 3 էջ 15, նկ. 2.1, էջ 28, նկ. 3.41, էջ 97, նկ. 4.1, էջ 127:

5. Առկա են տեխնիկական բնույթի այլ վրիպակներ և բացթողումներ:

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսական աշխատանքի արժեքը և կիրառական նշանակությունը: Այն ավարտուն գիտագործնական աշխատանք է, որտեղ լուծված են հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հողակադաստրային շրջանացման և կադաստրային գնահատման հիմնահարցերը:

Ատենախոսության սեղմագիրը կազմված է պահանջվող չափանիշներին համապատասխան և այն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթները, գիտական նորույթը և եզրակացությունները: Եզրակացությունները բխում են ատենախոսական աշխատանքի գիտական նորույթից և դաշտային, լաբորատոր հետազոտությունների արդյունքներից:

Եզրակացություն

Ամփոփելով «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատումը հողերի անթրոպոգեն փոփոխությունների ուսումնասիրությունների արդյունքներով» թեմայով դոկտորականատենախոսության ամբողջ բովանդակությունը հանգում ենք հետևյալ եզրակացության:

Գտնում են, որ ներկայացվածատենախոսական աշխատանքը կատարված է տեսական, գործնական և մեթոդական բարձր մակարդակով, այն իր հետազոտության արդյունքներով, գիտական նորույթով, եզրակացություններով և արված առաջարկություններով նպատակաուղղված է լուծելու սոցիալ-տնտեսական նշանակություն ունեցող հիմնախնդիր ՀՀ տարածքին համապատասխան:

Կարծում են, որ Սամվել Զալիբեկի Կրոյանի կողմից ներկայացված դոկտորականատենախոսական աշխատանքը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի դոկտորականատենախոսություններին ներկայացվող 8-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը արժանի է Ե.23.06.' «Գեոդեզիա, ներառյալ քարտեզագրություն և կադաստր» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտականաստիճանի շնորհմանը:

ՃՇՀԱՀ Զրային համակարգերի հիդրոտեխնիկական և հիդրոէներգետիկայի ամբիոնի տ.ժ.դ., պրոֆեսոր  Է.Հ. Խաչատրյան



Է.Հ. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում են
ՃՇՀԱՀ Մարդկային ռեսուրսների
կառավարման բաժնի ղեկավար



Ս. Հախվերդյան